

2023թ

Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի  
11-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Նետաձգություն սովորելու համար մի պատանի դիմեց իրենց երկրի տարիներով անպարտելի հռչակված ուսուցչին բազմահմուտ մրցակիցներից ոչ մեկ դեռևս չէր կարողացել հաղթել իրեն:

Կարճ ժամանակում տիրապետելով նետ արձակելու արվեստը երիտասարդը դառավ երկրի լավագույն նետաձիգներից մեկը: Մի օր սակայն նախանձը մարդուն բնորոշ այդ չարիքը բույն դրեց նրա հոգում: Ու պատանին որոշեց վերացնելու ուսուցչին իր ճանապարհից փառքի հասնելու մոլուցքով տարված և ձեռնոց նետեց նրան:

Հաջորդ օրը արևածագին կանգնեցին նրանք դեմ դիմաց հարյուր քայլ հեռավորության վրա, ու սկսվեցին նետերի տեղատարափը: Հավաքված ամբոխը որ համոզված էր հաղթելու է մեծանուն վարպետը շունչը պահած դիտում էր մարտը:

Սակայն ուսուցչի նետերն ավարտվում են ու նա վայր է դնում աղեղը: Ոգևորված իրեն ընձենոված հաջողությունից տղան վայրկյան անգամ չհապաղելով շեշտակի արձակում է նետը և ուսուցիչը տապալվում է գետնին: Ամբոխը խոր հառաչում է երիտասարդը չարախնդորեն հրճվում: Բայց հրճվանքը երկար չի տևում ժպիտը սառում է դեմքին երբ տեսնում է ուսուցչին նետն ատամներով բռնած:

Մոտենալով իր ապերախտ սանին վարպետն ասում է

Հիմա հասկացար ինչի քեզ չեմ սովորեցրել ատամներով նետ որսալու հնարքը:

1. Մեկ նախադասությամբ բնութագրի՛ր ուսուցչին:

(1 միավոր)

2. Բնագրից առանձնացրո՛ւ թույլ տրված լեզվական սխալները՝ դիմաց գրելով ճիշտը:

(4 միավոր)

3. Կետադրի՛ր համր բնագիրը:

(3 միավոր)

4. Կազմի՛ր տրված բառերի հոգնակիները՝ **ճառագիր, կոնքազոր, քթանցք, փողկապ, տարեդարձ, սպունգ, ապրանքանիշ, ստինք, երկնաքեր, շերամորդ:**

(1 միավոր)

5. Գրի՛ր նկանակ, երախայրիք նավախել, բամբիռ, համբակ, կորով, մարմաջ, մախաղ, լողակ, տատամսել բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ:

(2 միավոր)

6. Մեկնաբանի՛ր բազեի թներով զարդարված սագ, ծանր է Հիպոկրատի գլխարկը թևավոր խոսքերը:

(1 միավոր)

7. Կազմի՛ր չորս բարդ նախադասություն՝ **որ, ինչ** բառերը կիրառելով մի դեպքում որպես շաղկապ, մյուս դեպքում որպես հարաբերական դերանուն:

(2 միավոր)

8. Գրի՛ր նամակ սփյուռքում ապրող քո հասակակցին (երկու էջի սահմաններում):

(6 միավոր)